ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հոկտեմբերի 2023 թվականի N 1825-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «բ» ենթակետով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության (այսուհետ՝ նախարարություն) կառուցվածքում՝

1) զորակոչային և զորահավաքային համալրման ծառայությունն անվանափոխվում է հանրապետական զինվորական կոմիսարիատի.

2) կոլեգիայի աշխատանքների կազմակերպման և վերլուծության բաժինն անվանափոխվում է կազմակերպավերլուծական բաժնի.

3) կապիտալ շինարարության վարչությունն անվանափոխվում է կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության.

4) նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչությունը բաժանվում է՝ ստեղծելով թիկունքային ապահովման վարչությունը, սպառազինության և տեխնիկական ապահովման վարչությունը և զինվորական ներկայացուցչությունների բաժինը.

5) կադրային և ռազմակրթական քաղաքականության գլխավոր վարչությունից առանձնացման եղանակով ստեղծվում են երկու նոր կառուցվածքային ստորաբաժանումներ՝ ռազմագիտակրթական քաղաքականության վարչությունը և քաղաքացիական անձնակազմի կառավարման վարչությունը: Այդ կապակցությամբ կադրային և ռազմակրթական քաղաքականության գլխավոր վարչությունն անվանափոխվում է կադրային քաղաքականության գլխավոր վարչության.

6) ռազմական վերահսկողական ծառայությունից առանձնացման եղանակով ստեղծվում է նոր կառուցվածքային ստորաբաժանում՝ ներքին քննությունների վարչությունը.

7) ստեղծվում են հետևյալ կառուցվածքային ստորաբաժանումները՝

ա. ռազմաբժշկական ապահովման վարչությունը,

բ. կենտրոնացված փոխադրումների ապահովման (լոգիստիկ) վարչությունը,

գ. պահեստային տնտեսության կառավարման ծառայությունը,

դ. ստանդարտացման և չափագիտության ծառայությունը:

3. Սահմանել, որ նախարարության՝

1) հանրապետական զինվորական կոմիսարիատը, ռազմական ոստիկանությունը և գործերի կառավարչությունը գործում են գլխավոր վարչության կարգավիճակով.

2) ռազմական վերահսկողական ծառայությունը, կենտրոնական ռազմաբժշկական փորձաքննական կենտրոնը, պահեստային տնտեսության կառավարման ծառայությունը և քարտուղարությունը գործում են վարչության կարգավիճակով.

3) ստանդարտացման և չափագիտության ծառայությունը, մարդու իրավունքների և բարեվարքության կազմակերպման կենտրոնը, կենտրոնական արխիվը գործում են բաժնի կարգավիճակով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի դեկտեմբերի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

23.10.2023

ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ